

Թեանցը, որոնք են մարդուս արժանաւորութիւնը. ու անով ստեղծագործութեան ամէն զգայական էականներէն այնչափ վեր կը բարձրանայ մարդ :

Ի՞նչ կը տեսնեմ ես այն տղուն վրայ՝ որ քեզի յանձնուած է : Սէկէն՝ ի մէկ աչքիս առջև կու գան ճառարական հարողութիւնները, միտքը, գործունեայ հոգին՝ որ ըստ Բստուծոյ դիտմանցը սահմանուած է մտաւոր մարդ մը ընելու զայն տղայն. այն աշխոյժ կարողութիւնները, որ անոր մտածելու, ըմբռնելու, զձմարտութիւնը գտնելու, տրամաբանելու, միտք պահելու, խօսելու օգնութիւն կ'ընեն. որոնք են յիշողութիւն, իմացողութիւն, երեւակայութիւն, դատմունք, և այլն :

Ետքը տղուն վրայ կը նկատեմ ապա հայրը. ու արդար և վայելուչ բանի, օրինաց և գերագոյն ուղղութեան ընտրողութիւնը՝ որ խիղճ հայր կը կոչուի. ու այն քաղցր զգայունութիւնը, որ մարդկային եղբայրութեան կապն է, միանգամայն երկրիս երկնքին հետ ունեցած կապերէն մէկը. ու այն գեղեցիկ, ճշմարիտ, ու յաւիտենական և անփոփոխելի Բարոյն սէրը, որ մարդուս սրտին սքանչելի արմատն է : Սէկ խօսքով՝ վրան կը նկատեմ Բարոյական ու հրժանական այն ամէն գեղեցիկ հարողութիւնները, որ ծանուցեալ ձմարտութիւնը իրեն պիտի սիրել տան ու փափագիլ, ուզել, ու ի գործ դնել պիտի տան գեղեցիկն ու բարին :

Ուրիշ աւելի ազնուական բան չկայ տղուն վրայ. ասոնք են այն սրբազան օճանները, որ Բստուծոյ ընդունած է՝ այր առաքինութեան ու այր բարութեան ըլլալու համար :

ԲՆՈՒԹԻՒՆ

Հրահանգ, Զրօսանք և Սփոփանք հասարակաց : (Տես երես 87)

Հին աշխարհականներէն շատը, որոնք ջրի պէս մարդկան արիւն կը թափէին, ինչպէս Շամիրամ, Երբուզդոնոսոր, և այլք, իրենց կատաղութեան աղէկ դեղ և սանձ մը գտեր էին բնութեան զբօսանքը՝ պարտէզներ և անտառներ տնկելով, և հոն իրենց քանի մը ժամանցընելով՝ տանց և ազգաց կենաց կը խնայէին : Վիտկոնտիանոս՝ որ անգլիացի էր և մաղձով դառնացած հրէշ մը դարձեր էր, և բիւրաւոր քրիստոնէից արիւն թափել տուաւ, բոլոր Հռոմայ ինքնակալութեան մէջ սրտին հանգիստ մը չգտնելով, թողուց տերութիւնը և քաղուցաւ Վաղմատիոյ եզերքը Սալոն քաղաքը. հոն սկսաւ պարտիզականութիւն ընել, և “Սիայն այն ատեն, կ'ըսէ ժամանակակից պատմիչ մը, Վիտկոնտիանոս սկսաւ երջանիկ ապրիլ” : Երանի թէ քիչ մը կանուխ մտածած ըլլար այս բանս : — Շատ ատեն չէ՞ Սիբայիլ Հաու անունով անզգամ անգղիացի մը իր հայրենիքէն աքսորուեցաւ Ուլիսիոյ կղզիներուն մէկուն մէջ. հոն ալ աւազակութիւն ընելով՝ նորէն արդարութեան ձեռքն ընկաւ. այս մարդուս քովէն ելած բաներուն մէջ՝ գտան իր գրատետրը, որուն մէջ նշանակած էր, թէ ինչ հնարքով բոյսեր և հունտեր ժողովել կը մտածէ եղեր և պարտէզ տնկել. զարմացան քննողք, թէ անանկ քարասիրտ անձն ալ այսպիսի մտածութիւն ունի եղեր : . .

Հասկա մեր իսկ ազգին մէջ առաջին բռնաւոր յափշտակող թագաւորն Նորունդ՝ ինչով իր բռնութիւնը կը կազմեցընէր. այնպէս ահեղ և դաժան մարդ էր կ'ըսէին ժամանակին բանասէրքը, որ առտուն քունէն նոր ելած՝ որուն վրայ որ նայէր՝ կը ճաթեցընէր. անոր համար ծառաները դիմացը մեծ

մեծ քարեր կը դնէին, որ բարկութիւնը անոնց վրայ ինկնայ և իրենք ազատին. Վիոկղեօտիանոսէն աւելի խելացի ըլլալով՝ իր բռնութեան ապաստանարանը շինելէն ետեւ՝ զբօսարաններ ալ շինեց՝ անտառներ և պարտէզներ տնկելով, և անոնց մէջ պտըտած ատենը բռնաւոր ոգին կը հաշտեցընէր: Իսկ իրմէ առաջ Հայոց վրայ օրինաւոր իշխող բայց օտարաց վրայ անիրաւ իշխող Ղրտաշէսն Պարթև՝ աւելի խոր և զարմանալի վկայութիւն մը թողուցած է կ'ըսեն բնութեան ազդողութեանը՝ ամենէն բուռն և անգութ սրտերու վրայ ալ. Հայաստանի ընդարձակ սահմաններն իրեն հպարտ և փառասէր սրտին շատ նեղ գալով՝ Պարսից ալ տիրեց, անով ալ գոհ չեղաւ. արևելքի տէր անուանեցաւ, ուզեց արևմտից ալ տիրել: Հրաման հանեց որ պահ մը երկրագործն Հայաստան՝ սպառազէն զինուոր ըլլայ և գայ իր ետեւէն. հրաման տուաւ որ Սիհրգատ Պոնտացին իրեն ճամբայ բանայ. Եփրատ գետէն անցաւ ի Փոքր Ղսիա, և ձեռքը տարածած ատեն տեսաւ ծովը, և ըսաւ. Ու միայն ցամաքի, այլ պէտք է ծովուն ալ տիրենք. հրաման տուաւ, ու ալիքները նաւերով ծածկուեցան. վիզը տնկած ահագին վիշապի մը պէս ելաւ ծովը խմելու, ցամաքը կլլելու: Երբոր զօրացը քաշելու հրաման կու տար՝ կարծես թէ սեւ ամպ մը երկրիս երեսէն կը սահէր շուտ շուտ, ինքն ալ կայծակի մը պէս սև ամպէն կը փալփար: Երբեմն հպարտ միտքը կ'ուզէր իմանալ թէ քանի բիւր մարդիկ իր ձայնովը կը շարժին իրենց նման բիւրաւորներ գերի ընելու. համբանքի չէին գար. կը պատուիրէր որ ամէն զինուոր անցած տեղը քար մը ձգէ. և ահա դուրան դաշտը երկայնախոտ բլրոց պար մը կը ձեւանար. որուն վրայ աչքը պտըտեցուցած ատեն երբեմն ալ խիղճը զարնելով՝ կ'իմանար որ ինքն ալ անոնք ալ մարդ են, և քիչ տարիէ ետեւ անոնցմէ մէկն ալ ողջ պիտի չմնայ, մահուն լայն ոտքը զամէնն ալ պիտի կռիւ. այն ատեն կը հառաչէր ու կ'ըսէր.

“Լճի փառաց անցաւորի, Երդարև աւաղ. որ ուրիշ փառաց յոյս չունենալով՝ դարձեալ սիրտը կը խստանար, անյուսութիւնը կը գրգռէր զփառասիրութիւնն, և պոկունքները խածնելով, աչուրները կրակ դարձած, գլուխը շարժելով, ոտուրները զարնելով և ձեռքով սպառնալով՝ “Յառաջ, կը կանչէր զօրացը. և ինչպէս ժամանակակից պատմիչք մեծաբանելով կ'ըսեն, “Նովուն վրայ ցամաքի պէս կը քաշէր նաւով ծածկած, ցամաքի վրայ ծովու ճամբայ կը բանար. արև ատեն՝ զօրացնետաձգութիւնը ստուեր և գիշեր կը բերէր. գետերուն բարձրացած ջրերը՝ զօրքերուն խմել տալով կը ցամքեցընէր. իր վրանին տակէն հրաման տալով՝ պարսիկներ կը փցընէր, և մինակ անունը լսեցընելով քաղքէններ կ'առնուր, . . . Եւ այն ինչուան երբ այս յաջողութիւնս, ինչուան երբ այս անօգուտ աշխարհակալութիւնը: Նունաստանն ալ նուաճեցաւ, կարգը հռովմայ եկաւ. բայց բաղդը Ղրտաշիսի ժամը հնչէր էր. . . . Հայ ազգը յանիրաւի օտարի արիւն թափելու համար եղած չէ. զգուեցաւ այն անգութ փառքէն, զգուեցաւ օտար հողէ, յիշեց իր հայրենի հողն և ջուրն. և տեսնելով որ բռնաւորի մը ձեռք ուրիշի բռնաւոր ըլլալու գործիք մը եղած է, քաշեց բարկութեան ատեն սուրը իր թագաւորին դէմ, և ինչու հարուածը Ղրտաշիսի սրտին, երբոր անիկայ Ղթենքի հրաշակերտ տաճարաց մէջ կը պտըտեցընէր յաղթող աչուրները. . . Եւսը խաւարեցաւ, ծածկուեցաւ իր անհուն բանակը, ծածկուեցաւ իր տիրած և տիրելու երկիրները, փառքը սրտին վրայէն շուքի պէս անցաւ. . . Իսկ այն սահուն վայրկենին մէջ արդեօք սրտին ողջ մասէն ինչ բանի վրայ կը հանէր իր վերջի հառաչանքը. . . — միայն բնութեան սիրոյն վրայ. վասն զի իր աշխարհակալութեանց մէջ երբեմն միջոց գտնելով վայրեր էր բնութեան բարիքը իր հայրենեաց մէջ. այս յիշատակն էր որ իր յիշողութեան վերջի վայրկենին՝ եկաւ սրտին վրայ և կանչեց. “Լճ, մէկ

„ մ'ալ ես պիտի չտեսնեմ իմ հայրե-
 „ նեացս մէջ տանիքներուն ծուխը ,
 „ ծխած ու ելած շէնքերու դաշտերու
 „ վրայ ինջած . ալ պիտի չտեսնեմ գար-
 „ նանային նաւասարդին առաւօտը , ալ
 „ պիտի չտեսնեմ եղնիկներուն ցատքը
 „ տելը և եղջերուններուն վազվազելը .
 „ ես ալ պիտի չլսեմ որսորդական փողե-
 „ րուն ձայնը և թմբուկներուն դոփիւ-
 „ նը . . . “ (Նաղձայր մղոյ մըրկեալ ծխոյ
 „ շամանդաղեալ մակ հաւասար շինից և
 „ քաղաքաց . Ս՞ տայր ինձ զծուխ ծխա-
 „ նի , ասէր , և զառաւօտն նաւասարդի .
 „ Օ վազէն եղանց և զվազէն եղջե-
 „ րուաց . Ս՞ եք փող հարուաք և թմբ-
 „ կի հարկանէաք , : (Ս՞ ագիտ .) Եւ
 „ այս ըսելու ատեն՝ իր շունչն ալ այն
 „ ծխաններուն ծուխին պէս ցնդեցաւ ,
 „ արհամարհելով երկրիս փառքը այլ ոչ
 „ զբնութիւն :

Եւս մեծ և զարմանալի օրինակը
 բաւական ըլլայ ՚ի հաստատութիւն ա-
 „ ռակին , որ կ'ըսէ , “ Բնութիւն կա-
 „ կդէ զբնութիւն , : և թէ , բնու-
 „ թիւնը ոչ միայն զօրաւոր՝ այլ և հաճոյ
 „ զբօսանք մ'է , և հարուստ զբօսարան ա-
 „ մենայն վիճակի և ամենայն հասակի .
 „ միանգամայն և անմեղ զբօսարան մը ,
 „ և լի ամենայն զուարճութեամբ և զմայլ-
 „ մամբ : Սակեղէն վարդ մը կարկէհանէ
 „ կոկոններով և մարգարտէ ցօղերով՝ կըր-
 „ նան քանի մը վայրկեան զուարճացընել
 „ աչքը , բայց միշտ զուարճացուցիչ և յա-
 „ փշտակիչ են աչաց և մտաց դաշտին մէ-
 „ ջի բացուած պարզ ու հասարակ վարդն
 „ ալ , պատի մը ճեղքէ դուրս ելած կար-
 „ միր կոկոն մը , սարի մը գլուխ սփռած
 „ ճերմակ ու դեղին ծաղկըներ , բարձրէն
 „ սահած պզտի ջրիկ մ'ալ , սեւ ագարակ-
 „ ներ , դեղին հունձերու արտեր , կամ
 „ կանաչ գոգաձեւ հովիտներ , որ գրեթէ
 „ ամէն տեղ կրնան տեսնուիլ , առանց
 „ փնտռելու բնութեան աւելի աչք ձգող
 „ և զարմանալի դիրքերը : () րուան մէջ
 „ մէկ հանդարտ ժամ մը՝ բարձրահայեաց
 „ բլրի մը վրայ կամ վազուկ ու շարժուն
 „ ջրի մը քով անցուցած , ասկէ աւելի ա-
 „ նու զբօսանք կրնայ ըլլալ զգայուն սըր-

տի : Կը պատմեն Ս . Գիլքը թէ Վա-
 „ ղէք ծեր զօրապետն երբոր իր մէկ
 „ հատիկ դուստրը Լ'սքա՝ հարս տուաւ
 „ Գողոնիելի հարուստ օժիտներով , իր
 „ կտրիճ փեսայն որ մեծ յաղթութենէ
 „ մը դարձեր էր , իր նոր յաղթանակը և
 „ մրցանակը վայելելու յարմար ուրիշ օ-
 „ ժիտ չուզեց , բայց միայն ագարակ մը ,
 „ ուր ըլլան բլուրներ և վազուկ ջրեր .
 „ Վաղէք ալ տուաւ “ ըստ սրտի նորա
 „ զբօսանս բարձանց և զբօսանս ջրոյ ,
 „ առանց ասոնց՝ պակաս կը սեպէին իրենց
 „ վայելմունքը :

Եւս ինքն Սողոմոն , որ թերեւս մարդ-
 „ կանց մէջ ամենէն երջանիկը կրնայ ը-
 „ սուիլ , թէ մտքով և թէ զբօսանաց
 „ հարստութեամբ , իր իմաստութեան և
 „ զուարճութեանց մեծ նշանակը ցրցուց
 „ բնութեան վրայ իրեք հազարէն աւելի
 „ բան գրելով և բնութեան ու բուսոց
 „ նկարագիրներ . բայց ամենէն աւելի
 „ այս բնութեան զուարճութիւնը ցրցուց՝
 „ երբոր այլաբանեալ սիրոյ ճամբան , որ
 „ բարոյական բնութեան ամենէն զօրա-
 „ւոր կիրքն է , ամենեւին զուարթ ցուցը-
 „ նելու համար՝ լեռներու և դաշտերու
 „ մէջ գծեց . “ Եւսասիկ սա եկն վաղս
 „ առեալ ՚ի վերայ լեռանց , խայտացեալ
 „ ՚ի վերայ բլրոց , : և նոյն իսկ եր-
 „ կնահազորդ սիրոյն աւետիք և հրաւեր՝
 „ բնութեան տեսարանքը գտաւ . “ Եւս
 „ ձմեռն էանց , անձրեւք անցին եւ
 „ գնացեալ մեկնեցան . ծաղիկք երեւե-
 „ ցան յերկրի մերում . Ժամանակ ե-
 „ հաս յատանելոյ . ձայն տատարակիւն
 „ լի եղև յերկրի մերում . Թզենի ար-
 „ ձակեաց զբողբոջ իւր . որթք մեր
 „ ծաղկեալք ետուն զհոտս իւրեանց . . .
 „ — ելցուք յագարակս , ագցուք ՚ի շէնս
 „ և ՚ի պարտէզս , կանխեսցուք յայ-
 „ զիս , : Սեր բնութեան Լ'արիւն
 „ ալ մեր նախածնողքն երջանիկ ստեղծե-
 „ լով՝ իրենց ամենէն աւելի յարմար և զբօ-
 „ սալի տեղ և գործ՝ պարտէզ մը գտաւ .
 „ “ Տնկեաց Լ'ստուած զղրախտն . . և
 „ եդ զնոսա գործել և պահել , : տե-
 „ ղոյն գեղեցկութիւնը : — Ըստ գե-
 „ ղեցիկ և զգայուն փիլիսոփայութեամբ

կ'ըսէ մեր ճարտար և մեծ պատմաբանները
 Սիւնեայ մետրապօլիտն Ստեփանոս ,
 թէ “ Եւրոպայի ի կենցաղս՝ ոչ այլ
 , , ինչ , բայց միայն սեպհական ժառանգ-
 , , գութիւնն առն՝ յորում ծնեալ և սը-
 , , նեալ լինի և վայելել խորհրդի , որպէս
 , , զստինս մօր և զգութ չօր , այնպէս քաղցր
 , , թուեցեալ լինի ի միտս ժառանգոր-
 , , դին . վասն որոյ միշտ կարօտի շրջիլ
 , , տեսանել զբօսանուլ ինդամանիլ ի վե-
 , , րայ նորայ , , և գրեթէ գովութիւն
 մը կը սեպէ այս բանս (Բարիկ Սիւնեայ
 իշխանին (Սասակ ուրացողին չօրը) ,
 որ իր հայրենի ժառանգութեանը տի-
 րելով՝ ելեր էր անոր զուարճալի տեղե-
 րը պտըտելու և որս ընելու

Բայց ինչէն է , բարեկամ , որ այս
 բնութեան զբօսանքը լսելով , գուն քու
 բնութեանդ մէջ ուրախութեան հետ
 տրտմութի մ'ալ կը զգաս . ինչէն է որ
 երբեմն ուրախութե և զբօսանաց փա-
 փազն ալ մնորած կ'երեւայ սրտիդ մէջ .
 . . . Բնութիւնը անգեղջ է . այսինքն է
 իր բարիքն և զուարճութիւնը չզլանար .
 բայց մեր ներքին բնութեան խռովու-
 թիւնն է՝ որ արտաքնոյն հետ ունեցած
 ներդաշնակութիւննիս աւրեց . Սակայն
 դարձեալ մեր աւրուած շփոթած քնա-
 րը դաշնակելու համար՝ պէտք է բնու-
 թեան լարերուն ձայնովը շտկել . բնու-
 թիւնը առաջ մարդուս համար՝ իբրեւ
 առողջի առողջութիւնը միշտ պահելու
 օշարակ էր , հիմա իբրեւ հիւանդի ա-
 ռողջարար ըմպելիք մ'է . եթէ զմարդս
 միշտ զուարթութեան մէջ պահողը չէ ,
 գոնէ ամենէն զօրաւոր և պատրաստ
 Սփոփանքն ալ ինքն է Ս՝ Բաղ-
 ձալի բան է , արդարեւ բաղձալի մեր
 վերը յիշեալ պատմին ըսածը , “ Սեպ-
 հական ժառանգութիւնն առն՝ յորում
 ծնեալ և անեալ լինի , և վայելել , շրջիլ ,
 տեսանել , զբօսանուլ , ինդամանիլ , , ցան-
 կալի բան է գեռ այս երանազուրկ կե-
 նաց մէջ՝ Ս . Գրոց տուած օրհնութիւն
 մարդուս “ նստիլ ընդ որթովք իւրովք , ,
 շատ անուշ բան է՝ նաև օրուան երկար
 և դառն աշխատանքէն վերջը՝ ընտա-
 նեաց հետ բնութեան գեղեցիկ տեսա-

րանի մը մէջ կամ դիմաց՝ յօգնութիւն
 առնուլ . — Սակայն ինչ ընէ այն թը-
 շուառն՝ որ չունի ոչ միայն սեպհական
 որթերու և թղենեաց շուք , այլ և
 հայրենեաց հովանիքներէն զրկուած է .
 ինչ ընէ այն՝ որ հարկաւ կամ բռնու-
 թեամբ ստիպուած է պանդըխտու-
 թեան Սող երթայ դիմէ՝ նա ալ
 բնութեան գիրկը , որ մօր պէս ամենուն
 և ամէն տեղ բացուած է : Սէ միայն օ-
 տարաց բռնադատութեամբ , այլ շա-
 տոնք իրենց կամօքն հեռացած են ի
 հայրենեաց , կամ անոր թշուառութեց
 չդիմանալով , կամ ուրիշ պատճառաւ .
 տխրութեամբ կը հեռանան , արցուն-
 քով ճամբանին կ'ողոգեն , սրտերնուն
 վրայ վերք մը , բերաննուն վրայ հառա-
 չանք մը կայ . միայն բնութիւնն է որ
 պանդըխտութեան մէջ ալ զիրենք կը
 սփոփէ : Յետին կտրձութեամբ սրտի՝
 կը յաղթեն սիրոյ իրենց հայրենեաց և
 ընտանեաց տեսքին , բայց առանց բնու-
 թեան տեսքին՝ չեն կրնար իրենք իրենց
 ահեղ կտրձութեանը դիմանալ : Սեր
 ամենէն զօրաւոր և զարմանալի թա-
 գաւորը Տրդատ՝ իր խոր ծերութեան
 ատեն՝ տեսնելով ազգին ներկայ և մա-
 նաւանդ մօտակայ թշուառութիւնը՝
 խոր տրտմութեամբ մը դարձուց ահեղ
 աչուրները իր փառաց ասպարէզներէն ,
 և վերջի օրերը լեռներու վրայ բնու-
 թեան մէջ կը պատրաստուէր գերագոյն
 պսակին : Հայրենեաց օգտին պարտ-
 քը դարձեալ իջուց զինքը լեռներէն .
 և թէպէտ անկէ ետեւ միայն երկնից
 կ'ուզէր ասլըլ , բայց գեռ իննսուն տա-
 րուան որսի ելաւ իշխաններուն հետ ,
 որս ըլլալու այն երկրին և այն մարդ-
 կանց սիրոյն , արոնց համար վաթսուն
 տարի աշխատեր էր՝ սրով ու սիրով . —
 Իրմէ վերջը իրեն համեմատ անձ մը
 կը յիշէ՝ Հայաստան իր Վարմիր Սար-
 դանը . որ երբ իշխանակից նախարա-
 րաց յորդորանօք իր հայրենիքը ազա-
 տելու համար՝ միաբանեցաւ առ երեսս
 ուրացութեան սուրբ հաւատքին , բա-
 ւական չսեպելով իր հրապարակաւ
 դարձն ու զղջումն , թողուց իր մեծ ու

նունն ալ, իր փառքն ալ, քաշուեցաւ
Հայաստանի ամենէն անծանօթ կողմը,
և լերանց ու քարայրից մէջ սաղմոսնե-
րով և երգերով իր մեծ ու ընդարձակ
սիրտը կը հանգչեցընէր :

(ԳԻՏԻ ՀԱՐՈՒՆԱԿՈՒԻ)

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ

Օրհնեցէք քառանք երկնից .

ՍԵՂՄ .

Ղրուողեցէք թռչնեկիկք ,
Ի ընուծեան զարդք եւ ժրպիտք .
Ղրուողեցէք . ձեր անուշ
Երգոց մընան՝ սիրտք եւ յուշ :
Պարուն՝ փողոց ձեր նոր շունչ ,
Հովիտք դիպան վայրս ի հունչ ,
Եւ ծառք ձօնեն զոստ նորեկ
Ի թառս ոտից ձեր եւ յերդ .
Օ եփիւռք ի բոյն ձեր յաւեր
յամանեցին ի հրաւեր .
Ղրուողեցէք թռչնեկիկք ,
Ի ընուծեան խաղք գեղեցիկ :
Օ ինչ որ անոյշ՝ մինչ փափկիկ
Ըրձակ ի կուրծըս թռուցիկ
Յուրանցդ ի ձօճ մանրապէս
Ինդ մեր լարից գայք ի վէս .
Որ լըռութիւն յընդհատիկ
Հիւսեալ փափուկ դայլայլիկ
Իբր ոգեշունչ ի պատկեր
Լըշուէք երանգ ընդ ըստուեր ,
Ո՛վ ինքնարուեստ երգեցիկք
Ի նուծեան գեղոյ , թռչնեկիկք :
Թեթեւութեան թացդ ի փետուր
Պուք բեռն էք դուք ինչքդ հանուր .
Սանունք ի ձեւ , անսահման
Ունիք զօրոց օթարան ,
Եւ ըզտերեւս ի դահոյս
Եւ զցօղաթուրմ ծաղկանց բոյս .
Ձեւք մարդք պանծան ի մայիս ,
Պուք ոգետուր յամայիս .
Յոր ոչ այցէք դուք պարտէզ
Ի նկենդան իմն է երէզ .

Եւ նոճ՝ զսրգոյն մերկէ կերպ
Թէ ի նորուն բունիք ծերպ ,
Ղրուողեցիւ խընդամիտ
Ո՛վ բնութեան խաղք եւ ժրմիտ :
Ո՛րմընջեցէք սիրասուն
Վաղցր ընդ խոխոջ ջուրց սահուն ,
Ո՛րմընջեցէք ընդ զեփիւռ
Ո՛րնչ սաւառնէ թեւս ի սփիւռ ,
Օ փածաւալ՝ դ արշալոյս
Ո՛ր արդապրսակ եւ ի լոյս ,
Ինդ առագաստ ծրփծրփին
Ի զգոգ առեալ առ ափին .
Եւ ընդ ծառոց սաղարթուն
Տերեւաշարժ սօսափին ,
Սանրիկ ընդ ցօղ շառաչուկ
Ո՛ր արդին ի թերթսրն փափուկ ,
Ղրուողեցէք անուշիկ ,
() ն քաղցր է ձեր դայլայլիկ :
Կանխայարոյց ի մըրմունջ՝
Ուսոյն էք դուք ընկալուչ .
Ի ձեր բարբառ նախընծայ
Ի նուծիւն օրհնէ եւ ցընծայ .
Եւ լազեցէք , քաղցր է ձեր
Պաշնակ ի սիրտ կարեւր ,
Ում ի վշտաց երթեւեկ
Տարբերին միտքն անուրեք .
Որոյ աչաց վարագոյր
Կալեալ հանդէպ անպարոյր ,
Ում բնութիւն սեւալ է պաստառ
Ու ի լոյս՝ յածի՝ մութ խաւար .
Ձեր յանմեղուկ Ղրուողիւն
Խառնի նորուն հեծութիւն ,
Իբր ընդ ըստեղըն խընկոց
Ողջակիզին ծուխ եւ բոց
Որոտացեալ յեզր ամբոց : —
Ի ձեր դայլայլիկ
Իբրու յանոյշ սիկ
Խոնարհեալ ծաղիկ՝
Ի զմայլմ քաղցրիկ ,
Օ երդ առ վըտակին
Ո՛րմունջ ցաւազին ,
Եւ գեղեցկաթոյր
Ո՛ր արդենեաց ի բոյր .
Ինդ հովանեալ կացեալ ծառոյս՝
Փախըստական ձայնքդ յելեւէջ ի
{ թերթս հոգւոյս
Նաւալին զերդ շաղ
Սանր ի շամանդաղ